

05/10923-16
1/17.21 8432-16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 463 - Ղհ

ք.Երևան

«Ձեռ» 07 2016թ.

Ն.Ն. ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի օրենքի 16րդ հոդվածի 2-րդ մասով 31-րդ հոդվածի 4-րդ մասով, 32-րդ հոդվածի 12-րդ մասի «ա» և 16-րդ մասի «բ» կետերով և 64-րդ հոդվածով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Գ ր ա ն ց ե լ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության կադրերի ռեզերվում՝ 2016 թվականի հուլիսի 21-ից՝ ՀՀ ոստիկանությունից տեխսփոխված ոստիկանության գեներալ-մայոր Ներսես Հենրիկի Նազարյանին, շնորհելով փրկարարական ծառայության գեներալ-մայոր կոչում:

Ծառայությունը ՁՈՒ-ում և Ոստիկանությունում 21.07.2016թ. դրությամբ օրացուցային հաշվարկով կազմում է 32 տարի 06 ամիս 13 օր:

2. Ն Շ Ա Ն Ա Կ Ե Լ՝ համաձայն պայմանագրի, փրկարար ծառայության կադրերի ռեզերվում գտնվող փրկարարական ծառայության գեներալ-մայոր Ներսես Հենրիկի Նազարյանին ՀՀ ԱԽՆ Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ-Երևան քաղաքի փրկարարական վարչության պետի պաշտոնին:

3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Հիմք՝ ՀՀ Ոստիկանապետի 21.07.2016թ. թիվ 1893-Ա հրամանը

Ա.Երիցյան